ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

INTERNATIONAL CONFERENCE ON PATIENTS' RIGHTS

Translating patients' rights from legal texts into everyday care: The Ratification of the Oviedo Convention by Armenia

Protection of human rights in biomedicine III

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Պացիենտի իրավունքները
օրենքից առօրյա պրակտիկա

- ✓Պացիենտի իրավունքները ժամանակակից առողջապահական համակարգի առանցքն են
- ✓Օվիեդոյի կոնվենցիայի վավերացումը՝ սկիզբ համակարգային և մշակութային փոփոխությունների
- ✓Ինչպես են իրավունքները «իջնում» օրենքի մակարդակից բժշկի և պացիենտի առօրյա շփում

Կոնվենցիայի վավերացումը

- **Արժեքային ընտրություն է**

առողջապահության կենտրոնում մարդն է՝ իր արժանապատվությամբ, անձնական անձեռնմխելիությամբ ու ինքնությամբ

- **Քաղաքական պատասխանատվություն է**

պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել պացիենտի իրավունքները, այլ նաև ստեղծել մեխանիզմներ, որոնք իրականում պաշտպանում են այդ իրավունքները

Կոնվենցիայի վավերացումը

Ապագային ուղղված քայլ է, որը պահանջում է

- մտածել գործելակերպի և պրակտիկայի փոփոխության մասին, ոչ միայն օրենսդրության համապատասխանեցման
- ստեղծել այն ընթացակարգերը, որոնք թույլ կտան, որ օրենսդրությամբ ամրագրված իրավունքները ճշգրիտ և մշտապես իրացվեն բուժաշխատողի ամենօրյա պրակտիկայում և չմնան միայն թղթի վրա

Ինչպե՞ս են պացիենտի իրավունքները դառնում բուժաշխատողի ամենօրյա պրակտիկայի և պացիենտին բժշկական օգնության տրամադրման մաս



Օվիեդոյի կոնվենցիան ոչ միայն իրավական պարտավորություն, այլ նաև գործնական ուղեցույց

Օվիեդոյի կոնվենցիան միայն իրավական փաստաթուղթ չէ՝ այն նախատեսված է կիրառման համար

Մտածողության ձև, որը խրախուսում է.

Բժշկական միջամտությունը **չպետք է գերակայի մարդու արժանապատվությանը**

Տեխնոլոգիական առաջընթացը **չպետք է սահմանափակի մարդու իրավունքները**

Առողջապահության արդյունավետությունը **պետք է համադրվի էթիկայի եվ իրավունքների հետ**

Իրավունքներից դեպի պրակտիկա 3 մակարդակ

Օվիեդոյի կոնվենցիայի դրույթները կյանքի են կոչվում երեք մակարդակում

I. Իրավական և քաղաքական

II. Ինստիտուցիոնալ և կառավարման

III. Մարդկային և մշակութային



Իրավական և քաղաքական մակարդակ

- ✓Հայաստանը շարժվում է Օվիեդոյի կոնվենցիայի սկզբունքների ամբողջական ներդրման ուղղությամբ
- ✓Առողջապահության ոլորտի օրենսդրությունը հիմնականում համահունչ է Կոնվենցիային
- ✓Վավերացումը չի նշանակում ՀՀ օրենսդրության ամբողջական վերափոխում, այլ որոշակի բարելավումներ

Հոդված 9. Նախկինում հայտնած ցանկությունները

Հաշվի են առնվում բժշկական միջամտության վերաբերյալ այն բուժառուի կողմից նախկինում հայտնած ցանկությունները, որը միջամտության պահին ի վիճակի չէ հայտնելու իր ցանկությունները

🛡️ Իրավունքները չեն վերանում հիվանդության կամ գիտակցության կորստի դեպքում

Օրենսդրությունը գործում է ինստիտուտների միջոցով, այն ինքնուրույն չէ

Ինստիտուցիոնալ և կառավարման

- ✓Պացիենտի իրավունքների պաշտպանությունը պահանջում է ներքին ընթացակարգերի վերանայումներ բուժհաստատություններում
- ✓Էթիկական հանձնաժողովների հզորացում
- ✓ Հաշվետվողականության և բողոքարկման մեխանիզմների զարգացում
- ✓Առողջապահական կառավարման մշակույթի բարելավում

Մարդկային և մշակութային

- Պացիենտի իրավունքները իրականում ապրում են պացիենտ-բուժաշխատող հարաբերություններում
- Պացիենտի ձայնը լսելի է, երբ նա ներգրավված է որոշումների կայացման գործընթացում
- Պացիենտակենտրոն բուժօգնությունը սկսվում է պացիենտի՝ լսված լինելուց իրավունքի իրացումից ոչ թե օրենքից

Առաջխաղացման ուղին

- Իրավական բարեփոխումները կարևոր են, բայց բավարար չեն
- Փոփոխությունը սկսվում է, երբ օրենքները դառնում են **կառավարման, կրթության, օրինական պրակտիկայի մաս**
- Մշտական համատեղ աշխատանք պետության, բժշկական համայնքի և պացիենտների հետ
- Օվիեդոյի կոնվենցիան սկիզբ է, ոչ վերջակետ
- Միջազգային գործընկերներին ուղերձ է, որ մենք պատրաստ ենք կիրառել եվրոպական ստանդարտները և համագործակցել դրանց միասնական մեկնաբանման ու կիրարկման հարցերում

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ